



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք,
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 136-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 15 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով՝ **ավագանին որոշում է՝**

Հաստատել Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 15 հերթական նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին
2. Գառնի համայնքում 2023թվականի տեղական տուրքերի եվ վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների եվ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. Գառնի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար հավելավճարի կիրառման կարգը եվ չափը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին
5. Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2022 թվականի հունվարի 18-ի n 06-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձեվով օտարելու թույլտվություն տալու մասին
7. Համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման վերաբերյալ
8. Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ
9. Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ
10. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձեվով օտարելու թույլտվություն տալու մասին

12. <<Գառնիի մարզամշակութային կենտրոն>> մարզամշակութային կրթադաստիրակչական հաստատություն <<Գառնիի գեղարվեստի դպրոց>> արտադպրոցական կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին
13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձեվով օտարելու թույլտվություն տալու մասին
14. Համայնքում տեղական տուրքեր եվ (կամ) վճարներ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին
15. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
16. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին
17. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2022 թվականի սեկտեմբերի 28-ի n 109-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
18. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
19. Կոտայքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծման առաջադրանքը հաստատելու մասին
20. Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ

Կողմ -9

Ձեռնպահ – 0

Դեմ-0

- 1 ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ
- 2 ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
- 3 ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ
- 4 ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԱՄ
- 5 ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
- 6 ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
- 7 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
- 8 ԽԱԶԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ
- 9 ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 137

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին
և 2-րդ մասերով՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու
երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022
թվականի դեկտեմբերի 06-ը՝ ժամը 17:00:

Կողմ -9

Ձեռնպահ – 0 Դեմ-0

- 1 ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ
- 2 ԳԱՔՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
- 3 ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ
- 4 ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԱՄ
- 5 ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
- 6 ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
- 7 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ
- 8 ԽԱԶԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ
- 9 ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 138-Ն

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՅՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

Սահմանել Գառնի համայնքի վարչական տարածքում 2023 թվականին տեղական տուրքերի և վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:

Կողմ -9

Ձեռնպահ - 0

Դեմ-0

- 1 ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ
- 2 ԳԱՐՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
- 3 ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ
- 4 ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԱՐԱՄ
- 5 ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
- 6 ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
- 7 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ
- 8 ԽԱԶԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ
- 9 ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

(Handwritten signatures of the council members)

1 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 138-Ն ՈՐՈՇՄԱՆ

Գառնի համայնքի վարչական տարածքում 2023 թվականին տեղական տուրքերի, և վճարների տեսակները, տեղական տուրքերի, վճարների և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Կոպրայքի մարզի Գառնի համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները.

- 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
- 2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.
- 3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների եւ քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար.
- 4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.
- 5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
- 6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար.
- 7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.
- 8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների .

12) Գառնի համայնքի խորհրդանիշը (անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու համար, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու համար.

13) Գառնի համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման եւ (կամ) մատուցման թույլտվության համար.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում սահմանվում են տեղական վճարների հերեյալ տեսակները

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու եւ հաստատելու համար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի եւ շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար .

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար.

9) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայությունների մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.

11) համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.

12) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, Գեղարվեստի և մարզամշակութային կենտրոնի) ծառայություններից օգտվողների համար.

13) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

14) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.

15) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար.

16) համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

17) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար

18) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերն են .

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.:

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ

կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար կիրառելով 0.5 գործակից՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար կիրառելով 0.5 գործակից՝ 25000 դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8300 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 2500 դրամ ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11600 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 3500 դրամ

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 4500 դրամ

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 6600 դրամ

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 28000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 8400 դրամ :

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 13800 դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8300 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 2500 դրամ՝

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11600 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 3500 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 4500 դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 6600 դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 28000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 8400 դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000 դրամ կիրառելով 0.3 գործակից՝ 13800 դրամ

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար՝ կիրառելով 0.5 գործակից.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 5000 դրամ, կիրառելով 0.5 գործակից՝ 2500 դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60000 դրամ, կիրառելով 0.5 գործակից՝ 30000 դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 300000 դրամ, կիրառելով 0.5 գործակից՝ 150000 դրամ

դ. խաղատների համար՝ 800000 դրամ, կիրառելով 0.5 գործակից՝ 400000 դրամ

ե. շահումով խաղերի համար՝ 400000 դրամ, կիրառելով 0.5 գործակից՝ 200000 դրամ

զ. վիճակախաղերի համար՝ 120000 դրամ, կիրառելով 0.5 գործակից՝ 60000 դրամ

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 18000դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25000դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 40000 դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 600 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1500 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3000դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 6000դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 12000դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000դրամ

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ավտոմոբիլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ավտոմոբիլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Գառնի համայնքի խորհրդանիշը (անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես

օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ:

14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ:

15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չառնի համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ

6). համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ յուրաքանչյուր ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան 150 դրամ:

8) համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի համապատասխան՝ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի՝ Գառնի համայնքի ավագանին սահմանում է հետևյալ դրույքաչափերը

ՈՉ ԲԱՆԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ_ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

N	օբյեկտներ	օրենքով սահմանված դրույքաչափ	ավագանու կողմից սահմանված դրույքաչափերը
1	խանութներ	1 մ ² = 50-100 դրամ	1 մ ² = 50-100 դրամ
2	շուկաներ	1 մ ² = 50-100 դրամ	1 մ ² = 50-100 դրամ
3	հանրային սնունդ	1 մ ² = 50-100 դրամ	1 մ ² = 50-100 դրամ
4	բնակչության սպասարկում	1 մ ² = 50-100 դրամ	1 մ ² = 50-100 դրամ
5	հյուրանոցներ	1 մ ² = 20-50 դրամ	1 մ ² = 20-50 դրամ
6	այլ հասարակական շինություններ	1 մ ² = 20-50 դրամ	1 մ ² = 20-50 դրամ
7	արտադրական շինություններ	1 մ ² = 5-15 դրամ	1 մ ² = 5-15 դրամ
8	արդյունաբերական շինություններ	1 մ ² = 5-15 դրամ	1 մ ² = 5-15 դրամ
9	գրասենյակներ	1 մ ² = 5-15 դրամ	1 մ ² = 5-15 դրամ
10	կրթական հիմնարկներ	1 մ ² = 3-15 դրամ	1 մ ² = 3-15 դրամ
11	մշակույթի հիմնարկներ	1 մ ² = 3-15 դրամ	1 մ ² = 3-15 դրամ
12	առողջապահական հիմնարկներ	1 մ ² = 3-15 դրամ	1 մ ² = 3-15 դրամ
13	սպորտային հիմնարկներ	1 մ ² = 3-15 դրամ	1 մ ² = 3-15 դրամ
14	գիտահետազոտական	1 մ ² = 3-15 դրամ	1 մ ² = 3-15 դրամ

9) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ 2000 դրամ .

5.Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

10). ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11. համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով.

12) համայնքային ենթակայության <<Գառնիի մանկապարտեզ >> հաճախող յուրաքանչյուր երեխայի 5000 դրամ ամսեկան, համայնքային ենթակայության <<Գեղադիրի մանկապարտեզ >> հաճախող յուրաքանչյուր երեխայի 5000 դրամ ամսեկան:

13) Երաժշտական դպրոցում յուրաքանչյուր սովորողի համար 2500 դրամ , նույն ընտանիքից երկուսից ավելի երեխաների հաճախման ժամանակ երրորդ երեխայի ուսման վարձը

սահմանել անվճար, երկու և ավել խմբակ հաճախելու դեպքում յուրաքանչյուրից գանձել սահմանված վճարի չափի 50%-ը :

14) <<Գառնիի Արվեստի, Մշակույթի և Սպորտի կենտրոն>> Արտադպրոցական կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ում սովորողների համար 2000 դրամ

15) <<Գառնիի Արվեստի, Մշակույթի և Սպորտի կենտրոն>> Արտադպրոցական կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ում սովորողների համար՝ պար 2000 դրամ,

16) <<Գառնիի Արվեստի, Մշակույթի և Սպորտի կենտրոն>> Արտադպրոցական կրթադաստիրակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ում Կառատե -Դո Շոտոկան արևելյան մարտարվեստի 5000 դրամ

17) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

18) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով. 200դրամ

20) Քարերի սիմֆոնիա յուրաքանչյուր այցելույի համար 200դրամ՝

21) Ջրամատակարարման ծառայության դիմաց՝ ջրօգտագործող տնտեսությունների համար 1000 դրամ ամսեկան, ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր ջրի համար՝ 100 (հարյուր) դրամ կամ՝ ոչ կենցաղային նպատակով ջրօգտագործող տնտեսությունների և իրավաբանական անձանց մեկ մ³ ջրօգտագործման համար 120 դրամ:

22). համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.1700

23) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, համայնքապետարանի վարչական շենքի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան տուրքի դրույքաչափ սահմանել կիրառելով կանխավճարային կտրոնային համակարգ՝ մինչև 12 տեղանոց թեթև մարդատար մեքենաների յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 200 դրամ , մեկ օրվա համար՝ 1500 դրամ , մեկ շաբաթվա համար՝ 3000 դրամ, մեկ ամսվա համար՝ 15000 դրամ մեկ տարվա համար՝ 70000 դրամ , իսկ ավտոբուսների և բեռնատար ավտոմեքենաների մեկ ժամվա համար՝ 300 դրամ մեկ օրվա համար՝ 2000 դրամ, մեկ շաբաթվա համար 4000 դրամ մեկ ամսվա համար՝ 20000 դրամ, մեկ տարվա համար՝ 90000 դրամ:

24) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար:

25) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝ 200 դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 139-Ա

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով, **համայնքի ավագանին որոշում է.**

- Հաստատել Գառնիի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
- Հաստատել համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Գառնիի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և դրանց չափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
- Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 1-ից:

Կողմ - 9

Ձեռնպահ - 0 Դեմ - 0

- ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ
- ԳԱՐԻԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
- ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ
- ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԱՄ

5 ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ



6 ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ



7 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ



8 ԽԱԶԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ



9 ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱԿԻՏ



1 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված N Բ
ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի
ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի
N 139-Ա որոշման



Կ Ա Ր Գ

Գառնի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրա չափի

1. Սույն կարգով սահմանվում է Գառնի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար աշխատանքի վարձատրության պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը:

2. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճաններ և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ամսվա մեկից:

3. Գառնի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 10 %-ի չափով՝ ավելի բարձր դասային աստիճանի համար, շնորհված նաև այլ համայնքների աշխատակազմերում:

4. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:



ՀՀ Կոտայքի մարզի Գեղարձ համայնքի
ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի
N 139-Ա որոշման

Կ Ա Ր Գ

**Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային
ծառայողների Գառնիի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար
տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ
սահմանված հավելավճարի կիրառման և դրա չափի**

1. Սույն կարգով սահմանվում է համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների՝ Գառնիի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափը:

2. Աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է այն համայնքային ծառայողներին, որոնց համայնքային ծառայության բնագավառի ստաժը՝ դասային աստիճանի շնորհումից սկսած, Գառնիի համայնքապետարանում կազմում է առնվազն հինգ տարի:

3. Երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացմամբ՝ 10 %-ի չափով՝ 5 տարուց ավելի աշխատանքային ստաժի դեպքում և կիրառվում է սահմանված աշխատանքային ստաժի լրանալու ամսվան հաջորդող ամսվա մեկից:

4. Համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:



ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 139-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ 2022ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Հ/ h	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքի միավոր	Պաշտոնային դրույքաչափ (ՀՀ դրամ)	Հավելավճար (ՀՀ դրամ)	Աշխատավարձի չափը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6	7
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
1	Համայնքի ղեկավար		1	440000		440000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ		1	330000		330000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	300000		300000
	Ընդամենը		3	1070000		1070000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
	Համայնքի ղեկավարի խորհրդական		1	260000		260000
	Համայնքի ղեկավարի օգնական		1	230000		230000
	Ընդամենը		2	490000		490000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ						
	Անասնաբուժ		3	120000		360000
	Ընդամենը		3	120000		360000
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
	Գողթ գյուղի վարչական ղեկավար		1	260000		260000
	Ողջաբերդ գյուղի վարչական ղեկավար		1	250000		250000
	Գեղադիր գյուղի վարչական ղեկավար		1	250000		250000
	Հացավան գյուղի վարչական ղեկավար		1	240000		240000
	Գեղարդ գյուղի վարչական ղեկավար		1	240000		240000
	Ընդամենը		5	1240000		1240000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔՆԵՐ						

Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	330000	33000	363000
-----------------------	-------	---	--------	-------	--------

Տիրանսպորտի տեսազիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին

Բաժնի պետ	2.1-1	1	310000	31000	341000
Գլխավոր մանագետ	2.3-1	1	290000	29000	319000
Առաջատար մանագետ	3.1-1	1	228000	22800	250800
Առաջատար մանագետ-Օպերատոր	3.1-2	1	228000	22800	250800
Առաջատար մանագետ-Օպերատոր	3.1-3	1	228000	22800	250800
Առաջատար մանագետ-Օպերատոր	3.1-4	1	228000	22800	250800
Առաջատար մանագետ-Օպերատոր		1	228000		228000
Առաջատար մանագետ-Օպերատոր		2	228000		456000
Ընդամենը		9	1284000	184200	2710200

Քարտաշինության, գյուղատնտեսության և հողաշինության բաժին

Բաժնի պետ		1	310000		310000
Գլխավոր մանագետ		1	290000		290000
Առաջատար մանագետ		1	228000		228000
Առաջատար մանագետ		1	228000		228000
1-ին կարգի մանագետ		1	190000		190000
Ընդամենը		5	1246000		1246000

Աշխատակազմ (կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)

Առաջատար մանագետ-Սոցիալական աշխատող	3.1-10	1	228000	22800	250800
Առաջատար մանագետ-բարենվարության հարցերով կազմակերպչի		1	228000		228000
Առաջատար մանագետ-	3.1-12	1	228000	22800	250800

	Ձարգացման ծրագրի				
	1-ին կարգի մասնագետ	1	190000		190000
	1-ին կարգի մասնագետ	1	190000		190000
	1-ին կարգի մասնագետ	1	190000		190000
	1-ին կարգի մասնագետ	1	190000		190000
	Ընդամենը	7	1444000	45600	1489600
	ԸՆԴԱՄԵՆԸ	22		229800	5445800
	Վարորդ	2	180000		360000
	Էլեկտրիկ	1	120000		120000
	Բանվոր	1	140000		140000
	Գործավար	1	160000		160000
	Հավաքարար	4	100000		400000
	Ընդամենը	9	580000		1180000
	ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ	46	7804000	229800	9785800



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 140-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետը և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27-րդ և 27.1-ին հոդվածների դրույթները, **համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, համաձայն հավելվածի

Կողմ -9

Չեռնպահ - 0

Դեմ-0

- 1 ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ
- 2 ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
- 3 ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ
- 4 ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԱՄ
- 5 ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
- 6 ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
- 7 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ
- 8 ԽԱԶԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ

9 ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Handwritten signature

1 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Գառնի
համայնքի
ավագանու 2022 թվականի
նոյեմբերի 22-ի N 140-Ա որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	4
ՄԱՍ 2. ՀԱՄԱՅՆՔԻ (ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ) ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	5

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում օրենսդրությամբ սահմանվել է համայնքում իրականացվող ռազմավարական ծրագրավորման երեք փուլ, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես դրանց ծրագրավորման ժամանակային հորիզոնով, այնպես էլ յուրաքանչյուր փուլում ծրագրավորվող տարրերի ագրեգացման մակարդակով: Այսպես, կախված ծրագրավորման ժամանակային հորիզոնից՝ նախատեսվում է հնգամյա ժամանակահատվածի (երկարաժամկետ), եռամյա ժամանակահատվածի (միջնաժամկետ) և մեկ տարվա ժամանակահատվածի (կարճաժամկետ) ծրագրերի մշակում: Երկարաժամկետ ծրագրերում ծրագրային տարրերը ներկայացվում են ագրեգացման առավել բարձր մակարդակով, քան միջնաժամկետ ծրագրերում, իսկ միջնաժամկետ ծրագրերում դրանց մակարդակն ավելի բարձր է, քան կարճաժամկետ ծրագրերում: Համայնքի երկարաժամկետ ծրագիրը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն է, միջնաժամկետ ծրագիրը՝ երեք տարվա համար կազմվող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է, իսկ կարճաժամկետ ծրագիրը՝ մեկ տարվա համար կազմվող համայնքի բյուջեն է:

Առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ) հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար:

Համայնքի ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար կառավարելու ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:

Ներկայացվում են համայնքի կողմից իրականացվող ծրագրերի գծով առաջիկա տարվա ծախսերի հաշվարկները և ՄԺԾԾ ծախսերի գնահատականները:

Համայնքի ՄԺԾԾ-ն բաղկացած է երկու մասից՝

- համայնքի եկամուտների շարադրող մաս,
- համայնքի (համայնքի հնգամյա զարգացման ծրագրից բխող) ծախսային քաղաքականությունը շարադրող մաս:

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համայնքների բյուջեների եկամուտների կանխատեսումներում հաշվի են առնվել յուրաքանչյուր եկամտատեսակի առանձնահատկությունները, այդ եկամուտներին առնչվող՝ ՀՀ օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունները:

1.1. Տեղական հարկեր

ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղական հարկերից ներկայումս կանխատեսումներ կատարվել են համայնքում պարտադիր կիրառվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարները ենթակա են վճարման տեղական բյուջեներ:

Կանխատեսումներ իրականացնելիս հաշվի են առնվել նաև անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների, դրանց առանձին խմբերի, ինչպես նաև հարկման որոշ օբյեկտների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները:

Իրատեսական կանխատեսումներ կատարելու համար դիտարկվել է նախորդ տարիներին այդ հարկերի գանձելիության մակարդակը, ինչպես նաև այս բնագավառում առկա խնդիրների առաջացման պատճառները ու դրանք հաղթահարելու հնարավոր ուղիները:

1.2. Տեղական տուրքեր և վճարներ՝

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համայնքի ավագանին սահմանում է համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը: Կանխատեսումներն իրականացվում են հիմք ընդունելով նշված դրույքաչափերը, համայնքում գործող ձեռնարկատիրական ընկերությունների գործունեության տեսակները, որով պայմանավորված հաշվարկվում են տեղական տուրքի և /կամ/ վճարի հավաքագրման հնարավորությունը: Դիտարկվում է նաև վերջին տարիներին համայնքում գործող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աճի դինամիկան:

Ի լրումն տեղական տուրքերի և վճարների, ինչպես նաև դրանց դրույքաչափերի, համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է նաև տեղական տուրքի կամ վճարի արտոնություն՝ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարելով տեղական տուրքը կամ տեղական վճարը: Նշված արտոնությունները ևս հիմք են ընդունվում կանխատեսումներ կատարելիս:

1.3. Այլ եկամուտներ

Այլ եկամուտներն են համայնքների և (կամ) նրանց հիմնադրած ձեռնարկությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրերի համապատասխան գանձվող վճարները, այդ թվում՝

ա) համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները, որոնց հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել նախորդ տարիների համար կնքված պայմանագրերի ցուցանիշները:

գ) Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների և այլ եկամուտների կազմում հաշվառվող, վերը չնշված ցանկացած այլ եկամտատեսակի գծով մուտքերը:

1.4. Պաշտոնական դրամաշնորհներ

Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին համապատասխան համայնքների բյուջեների վարչական մասի եկամուտների կազմում կարող են նախատեսվել պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները:

ՄԱՍ 2. ՀԱՄԱՅՆՔԻ (ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ) ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ոլորտային գերակայությունները որոշվում են ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրի գերակայությունների, այնպես էլ ՀՀ կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունների հիման վրա:

ՄԺԾԾ-ը կազմվել է հաշվի առնելով հետևյալ ոլորտային գերակայությունները՝

2.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մատուցում: - Շարունակվում է բնակչությանը որակյալ հանրային ծառայությունների մատուցումը, աշխատակազմի և համայնքային ենթակառուցվածքների բնականոն գործունեությունը, օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների կատարումը, աշխատակազմի մասնագիտական կարողությունների զարգացումը:

2.2 Պաշտպանության կազմակերպում: - Աջակցություն է ցուցաբերվում երկրի պաշտպանունակության բարձրացմանը:

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում: - Նախատեսվում է բարձրացնել համայնքում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու՝ բնակչության պատրաստվածության մակարդակը:

2.3 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն: - Ոլորտում կարևորվում է արտաքին լուսավորման համակարգերի կառուցման, ջրամատակարարման համակարգերի վերանորոգման, նոր համակարգերի կառուցման աշխատանքները: Նպատակն է ունենալ լուսավոր և անվտանգ փողոցներ, բարելավել բնակչության կենսապայմանները՝ ապահովելով որակյալ ջրամատակարարում, ունենալ ջրի խնայողական օգտագործում:

2.5 Տրանսպորտի ոլորտ: - Նպատակն է համայնքում բարելավել ներհամայնքային ճանապարհների վիճակը, կառուցել նոր ճանապարհներ:

2.6 Սոցիալ-մշակութային ոլորտ: - Կարևորվում են նախադպրոցական, արտադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության ապահովումը, նշված կառույցների նյութատեխնիկական հագեցվածությունը, համայնքային մշակութային կենտրոնի ստեղծումը և դրա պահպանումը, մասնագետների որակավորումը, ընթացիկ վերապատրաստումները, աշխատավարձի բարձրացումը: Առանձնացվում են նաև համայնքում առկա առողջապահական կազմակերպություններին աջակցությունը՝ ընթացիկ վերանորոգումների, սարք-սարքավորումների ձեռքբերման մասով: Սոցիալական ապահովության բնագավառում շարունակվում են առանձնակի ուշադրության կենտրոնում մնալ անապահով ընտանիքների, թոշակառուների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանվածության և հաշմանդամների լուծում պահանջող խնդիրները:

Անասնաբուժություն և բուսասանհիգիենա: - Բնագավառում շարունակվում են տնային տնտեսություններին աջակցությունը, անասնապահության խթանումը:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտ: - Համայնքում մաքուր բնակավայրեր, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների, անվտանգ միջավայրի ապահովում: Աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցում, թափառող կենդանիների վնասազերծում:

Գառնի համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրի վարչական և ֆոնդային մասերի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների ներկայացվում են *Աղյուսակ 1*-ում:

Գառնի համայնքի 2023-2025թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ներկայացվում են *Աղյուսակ 2*-ում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 141-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 06-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և հիմք ընդունելով բյուջեում առկայությունը՝ **ավագանին որոշում է՝**

- Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 06-ի «Գառնի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 06-Ն, որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելվածի շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 9

Ձեռնպահ - 0 Դեմ - 0

- 1 ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ
- 2 ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
- 3 ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՍԻՐԱԿ
- 4 ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԱՄ
- 5 ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
- 6 ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
- 7 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
- 8 ԽԱԶԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ

9 ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ



1 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Գարնի համայնքի 2022թ-ի բյուջեի փոփոխություն և վերաբաշխում կատարելու վերաբերյալ

Հազար.դրամ

Տողի համարը	Բաժին	Խումբ	Ուղև	Բյուջետային եկամուտների և ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Հոդված	Ընդամենը	Փոփոխություն	Զեղչված
1261	2	6	1	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ			+63872.4	63872.4
1	3	5	20	Այլ տեղական վճարներ		12600.0	+4430.0	17030.0
ԾԱՆՍԵՐ								
2	6	4	1	Փողոցների լուսավորում	4212	4587.7	+800.0	5387.7
2	06	03	01	Ջրամատակարարում	4212	27200.0	+3630.0	30830.0
2	06	03	01	Ջրամատակարարում	5113		+62552.4	62552.4
2	04	05	01	կամրջային կառուցվածքների վերականգնում	5134		+1200.0	1200.0
2	04	05	01	կամրջային կառուցվածքների վերականգնում	5113		+120.0	120.0
2 11.01.02	11	01	02	Պահուստային ֆոնդ վարչ. բյուջե	4891	8461.3	-1509.5	6951.8
2	04	02	04	Ուղղման ցանցի նորոգում	4657		+1109.5	1109.5
2	01	01	01	Մասնագիտական ծառայություններ	4241	1859.3	+400.0	2259.3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 142-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հոդային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի,
«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ
կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ
550-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Մարատ Մյասնիկի Պետրոսյանի դիմում
